

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/1

6 սեպտեմբերի 2012թ.

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 28.08.2012թ-ի նիստում քննության է առնվել «Դելտա Թերմ» ՍՊԸ բողոքները « ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 23.07.2012թ. հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2202159 արձանագրության և 14.08.2012թ. թիվ 1103176 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը և ստուգման ակտը թողնվել են անփոփոխ: Մասնավորապես, համաձայն « ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 09.07.2012թ. թիվ 2202159 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Դելտա Թերմ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 23.07.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2202159 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

Հարկային տեսուչ Կարեն Հովհաննիսյանի կողմից «Դելտա Թերմ» ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Հր.-Քոչար 20-27 հասցեում գտնվող խանութից 23.07.2012թ. ժամը 15:18-ին կատարվեց հսկիչ գնում 70.000 դրամի չափով՝ ջեռուցման համակարգի անջատարներ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Տնօրենի կողմից գումարը չնուղազգրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ՝ ժամը 15:21-ին, ՀԴՄ-ից դուրս բերվեց «Հ» հաշվետվություն՝ 1800 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Հ» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 70.000 դրամը, ժամը 15:48-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 15:48-ին նորից դուրս բերվեց «Հ» հաշվետվությունը՝ 70.000 դրամ ընդհանուր գումարով:

Գնված ապրանքը ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողների կողմից ետ վերադարձվեց տնտեսվարողին և ետ ստացվեց հսկիչ գնման գումարը, որից հետո տպվեց վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքով սահմանված կարգով:

Այնուհետև համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 30.07.2012թ. թիվ 1103176 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Դելտա Թերմ» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 14.08.2012թ-ին կազմվել է թիվ 1103176 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է:

Հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտի մոտ « ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 23.07.2012թ. թիվ 2202159 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2202159 արձանագրությունը, որով արձանագրվել է « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը, և ղեկավարվելով «ՀՀ-ում

ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի ու «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով տնտեսվարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք՝ 150.000 դրամի չափով:

<Դեյտա թերմ> ՍՊԸ բողոքներում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի 09.07.2012թ. թիվ 2202159 հանձնարարագրով <Դեյտա Թերմ> ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն:

23.07.2012թ. ընկերության տնօրենին է հանձնվել թիվ 2202159 արձանագրությունը, որում նշվել է, թե իբր ք.Երևան, Հր.Քոչարի 20-27 հասցեում գտնվող խանութից կատարվել է հսկիչ գնում, որի արդյունքում դրամարկղային կտրոն չի տրամադրվել:

07.08.2012թ. փոստային առաքմամբ ընկերության հասցեով ուղարկվել է թիվ 1103176 ակտի նախագիծը, իսկ 16.08.2012թ-ին՝ թիվ 1103176 ակտը, որով ընկերությանը տուգանք է առաջադրվել 150.000 դրամի չափով:

Նախ նշենք, որ որևէ գնում խանութից չի կատարվել, խանութից որևէ ապրանք չի վաճառվել հսկիչ գնում կատարող անձին: Եթե նույնիսկ ընդունենք, որ վերջինիս կողմից ինչ-որ կանխավճար է թողնվել խանութում, ապա այդ առումով նշենք, որ եթե ապրանք չի իրացվել, ինչ դրամարկղային կտրոն տրամադրելու մասին կարող է խոսք լինել: ՀՀ Կառավարության 26.08.2004թ. «Հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» որոշման 19-րդ կետի <ա> ենթակետի համաձայն. «Պատասխանատու անձը պարտավոր է՝

ա) հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել դրամական գումարը, որոշել ընդհանուր գումարը և տեղեկացնել գնորդին, պատվիրատուին և այլն»: Նույն որոշման 19-րդ կետի <բ> ենթակետի համաձայն. «ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն)»: Եթե գումար խանութում չի վճարվել և ապրանք չի իրացվել, ինչ ՀԴՄ կտրոնի մասին կարող է խոսք լինել, հասկանալի չէ: Ինչպես նշվել է առարկություններում, 70.000 դրամի հսկիչ ՀԴՄ տպվել է հարկային տեսուչի կողմից:

Ստուգումն իրականացնող տեսուչները խախտել են նաև ստուգման ժամկետը: Ստուգումը սկսվել է 09.07.2012թ-ին, իսկ արձանագրությունը կազմվել է 23.07.2012թ-ին:

Վերոգրյալի հիման վրա ընկերությունը խնդրում է 23.07.2012թ. կազմված թիվ 2202159 արձանագրությունները և ստուգման ակտը համարել չեղյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստաթղթերը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նախ նշվեց, որ բողոքում բերված այն պնդումը, որ ստուգումն իրականացնող տեսուչները խախտել են ստուգման ժամկետը, այն է՝ ստուգումը սկսվել է 09.07.2012թ-ին, իսկ արձանագրությունը կազմվել է 23.07.2012թ-ին, հիմնավոր չէ: Մասնավորապես, 09.07.2012թ-ին ոչ թե սկսվել է ստուգումը, այլ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի կողմից հրապարակվել է ընկերությունում ուսումնասիրություն (հսկիչ գնում) իրականացնելու վերաբերյալ թիվ 2202159 հանձնարարագիրը: Վերջինիս հիման վրա 23.07.2012թ-ին ընկերությունում կատարվել է ուսումնասիրություն (հսկիչ գնում) և կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2202159 արձանագրությունը:

Ընկերության բողոքներում բերված այն պնդումների վերաբերյալ, որ. «... որևէ գնում խանութից չի կատարվել, խանութից որևէ ապրանք չի վաճառվել հսկիչ գնում կատարող անձին: Եթե նույնիսկ ընդունենք, որ վերջինիս կողմից ինչ-որ կանխավճար է թողնվել խանութում, ապա այդ առումով նշենք, որ եթե ապրանք չի իրացվել, ինչ դրամարկղային կտրոն տրամադրելու մասին կարող է խոսք լինել:», նշվեց հետևյալը:

<Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. <Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի>:

Ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձինք պնդեցին, որ հարկային տեսուչ Կարեն Հովհաննիսյանի կողմից 23.07.2012թ. ժամը 15:18-ին ընկերության խանութից կատարվել է հսկիչ գնում, մասնավորապես՝ ջեռուցման համակարգի արքեսուարներ ձեռք բերելու դիմաց որպես կանխավճար կանխիկ վճարվել է 70.000 դրամ:

Ուսումնասիրության ընթացքում իրականացված համապատասխան գործողություններով հիմնավորվել է ընկերության կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասվորապես, ժամը 15:21-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվությունը (որում ներառված չէր կատարված վճարման արժեքը), կատարված վճարման արժեքը ժամը 15:48-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 15:48-ին նորից դուրս բերվել <Z> հաշվետվություն:

Վճարված կանխավճարի դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստն արձանագրելուց հետո նշված գումարը ետ է վերադարձվել ընկերությանը: 70.000 դրամն ընկերությանը ետ վերադարձվելու վերաբերյալ 23.07.2012թ-ին կազմվել է թիվ 2202159 ակտը, որը ստորագրվել է նաև ընկերության տնօրեն՝ Նարինե Մոսեսյանի կողմից: Ընդ որում, վերջինս նշեց, որ գումարը ետ վերադարձվելու վերաբերյալ 23.07.2012թ-ի թիվ 2202159 ակտում դրված ստորագրությունը պատկանում է իրեն:


Վերոգրյալ փաստերը հիմնավորում են իրականացված հսկիչ գնման ընթացքում ընկերությանը որպես կանխավճար վճարվելու և դրա դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու հանգամանքը: Արդյունքում, ղեկավարվելով <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով ստուգման ակտով կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Արձանագրությունը և ստուգման ակտը թողնել անփոփոխ:  
Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:



S. A. ՐԱՐՍԵՂՅԱՆ